ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 24.01.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/70

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.11.2017թ. թիվ 03/26-3/22068-17 գրությամբ «Մակսիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 28.11.2017թ. թիվ ԴՎԱ/4301 գրության հիման վրա, 30.11.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Մակսիմ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 28.11.2017թ. թիվ ԴՎԱ/4301 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 15.03.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-3/1-2 ծածկագրով պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. հոկտեմբերի 25-ից միակողմանի մասնակի լուծել է վերը նշված պայմանագիրը՝ 33 հատ ծաղկային կոմպոզիցիաների (ծաղկեպսակ մեծ) մասով:

Վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 24.11.2017թ. ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Սարգիս Պետրոսյանը և Ամրամ Օհանյանը:

3. <u>«Մակսիմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մակսիմ» ՍՊԸ-ն 10.12.2017թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ պատվիրատու) և «Մակսիմ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ ընկերություն) միջև 15.03.2017թ. կնքվել է պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման ՇՀԱՊՁԲ-3/1-2 ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ պայմանագիր):

Պայմանագրի 3.2.3 կետի համաձայն՝ գնորդը պարտավորվում է պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի

խախտման դեպքում՝ նաև պայմանագրով նախատեսված տույժերը, որը կազմում է 0,05 տոկոս յուրաքանչյուր ուշացված օրվա համար:

Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն՝ վաճառողը իրավունք ունի լուծել պայմանագիրը, եթե գնորդը էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն պայմանագրի 3.3.4.1 կետի համաձայն՝ գնորդի կողմից պայմանագրի խախտելը էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

Պայմանագրի 4.2 կետի համաձայն՝ գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ դրամական միջոցները վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով հավելված 3-ով նախատեսված ամսում, եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով վճարման ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը նույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ, քան 2017թ. դեկտեմբերի 10-ը:

Ըստ պայմանագրի գնման ժամանակացույցի՝ ծաղկային կոմպոզիցիաներ /Ծաղկեպսակներ մեծ/ պետք է մատակարարվեին 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակում՝ համապատասխանաբար՝ 20, 30, 30 թվաքանակով:

Ըստ պայմանագրի հավելված թիվ 3՝ վճարման ժամանակացույցի՝ ծաղկեպսակների համար նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների՝ մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներում:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ պատվիրատուի կողմից բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները: Այսպես.

1. Հանձնման-ընդունման թիվ 2 արձանագրությունը ստորագրվել է 31.03.2017թ., սակայն վճարումը կատարվել է միայն 03.05.2017թ., 25 բանկային օր հետո, ուշացումը՝ 5 բանկային օր:

2. Հանձնման-ընդունման թիվ 5 արձանագրությունը ստորագրվել է 07.06.2017թ., սակայն վճարումը կատարվել է միայն 03.07.2017թ., 19 բանկային օր հետո, ուշացումը՝ 4 բանկային օր:

3. Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվել է 12.07.2017թ., սակայն վճարումը կատարվել է՝ 04.08.2017թ., 17 բանկային օր հետո, ուշացումը՝ 2 բանկային օր:

Հիմք ընդունելով պատվիրատուի կողմից ապրանքի համար վճարելու ժամկետների բազմիցս խախտումները՝ «Մակսիմ» ՍՊԸ-ն պատվիրատուին ուղղված 28.08.2017թ. գրությամբ հայտնել է հետևյալը. «Չնայած բազմաթիվ գրավոր և բանավոր դիմումներին, դուք շարունակում եք խախտել՝ մատակարարված ապրանքների դիմաց վճարում կատարելու Ձեր պարտավորությունը: Հաշվի առնելով Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ստեղծված վերը նշված իրավիճակը, ինչպես նաև այն հանգամանքը, որ չկան՝ հետագա մատակարարվելիք ապրանքների դիմաց Ձեր ստանձնած վճարման պարտավորության ժամանակին և պատշաճ կատարելու երաշխիքներ: Դրա մասին են վկայում նաև այն հանգամանքը, որ մեր միջև կնքված ՇՀԱՊՁԲ-3/1-2 պայմանագրի համաձայն՝ մատակարարված ապրանքների դիմաց վճարումները բազմիցս առանց հիմքի և պատճառաբանության ուշացրել եք: Դրանով դուք թույլ եք տվել նշված պայմանագրի 4.2 կետի կետանց, ստեղծում եք 3.3.4.1 կետով մեզ վերապահված իրավունքից միակողմանի լուծել պայմանագիրը: Մասնավորապես.

1. Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվել է 31.03.2017թ., սակայն վճարումը կատարվել է՝ 03.05.2017թ., 25 բանկային օր հետո, ուշացումը՝ 10 բանկային օր, գումարը՝ 859.800 ՀՀ դրամ:

2. Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվել է 07.06.2017թ., սակայն վճարումը կատարվել է՝ 03.07.2017թ., 19 բանկային օր հետո, ուշացումը՝ 4 բանկային օր, գումարը՝ 429.900 ՀՀ դրամ:

3. Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվել է 12.07.2017թ., սակայն վճարումը կատարվել է՝ 04.08.2017թ., 17 բանկային օր հետո, ուշացումը՝ 2 բանկային օր, գումարը՝ 343.920 ՀՀ դրամ:

Իսկ առանձին մատակարարումների մասով ընդհանրապես վճարումներ չեն կատարվում մինչ օրս, առանց մատնանշելու մեր միջև կնքված պայմանագրից կամ ՀՀ օրենսդրությունից բխող որևէ հիմնավորում:

Հաշվի առնելով վերը շարադրվածը, հիմք ընդունելով մեր միջև կնքված պայմանագրերը և ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, հետագայում մեր Ընկերության անվճարունակությունը կանխելու նպատակով, տեղեկացնում ենք, որ ՇՀԱՊՁԲ-3/1-2 պայմանագիրը լուծում ենք մասնակի՝ հրաժարվելով սեպտեմբերի 1-ից մինչև 2017թ. 4-րդ եռամսյակի վերջ մատակարարման ենթակա ապրանքների մատակարարումից ամբողջությամբ՝ պահանջելով մինչև 01.09.2017թ. մատակարարված ապրանքների դիմաց վճարում ամբողջ ծավալով»:

Ի պատասխան «Մակսիմ» ՍՊԸ-ի վերոհիշյալ գրության՝ պատվիրատուն «Մակսիմ» ՍՊԸ-ի գրությունից գրեթե երկու ամիս անց, այն է՝ 20.11.2017թ. թիվ ԴՎԱ/4240 գրությամբ հայտնել է հետևյալը. «ՀՀ պաշտպանության նախարարության և Ձեր միջև կնքված ՇՀԱՊՁԲ-3/1-2 պայմանագրի համաձայն, Ձեր ընկերությունը պարտավորվում էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2017թ. ընթացքում մատակարարել ծաղկային կոմպոզիցիաներ /Ծաղկեպսակ մեծ/: Համաձայն պատասխանատու ստորաբաժանման համապատասխան գրության 2017թ. 4-րդ եռամսյակին, մասնավորապես 20.10.2017թ. ծանուցվել եք վերը նշված ապրանքների մատակարարման վերաբերյալ, սակայն մատակարարում չեք իրականցրել: Հիմք ընդունելով պայմանագրի 3.1.7.1 կետի բ ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. հոկտեմբերի 25-ին միակողմանի մասնակի լուծում է վերը նշված պայմանագիրը՝ 33 հատ ծաղկային կոմպոզիցիաները /Ծաղկեպսակ մեծ/ մասով: Տեղեկացնում ենք, որ «Մակսիմ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցում ստանալուց հետո 5 բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 43.000 ՀՀ դրամ որպես տույժ՝ մատակարարման ժամկետների խախտման համար: Միաժամանակ տեղեկացնելով, որ «Մակսիմ» ՍՊԸ-ից կգանձվի պայմանագրի կատարման ապահովման գումար՝ որպես պայմանագրի կատարման ապահովում /կնքված պայմանագրի ընդհանուր գումարի 10 %/»:

Սակայն վկայակոչված փաստերի համադրումից պարզ է դառնում, որ պատվիրատուն, հաշվի չառնելով «Մակսիմ» ՍՊԸ-ի 28.08.2017թ. գրությունը՝ Ընկերության կողմից

պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, 20.11.2017թ. թիվ ԴՎԱ/4240 գրությամբ հայտնել է, որ 25.10.2017թ ինքն է միակողմանի մասնակի լուծում պայմանագիրը:

Ինչ վերաբերվում է ՀՀ պաշտպանության նախարարության այն պնդմանը, որ պատասխանատու ստորաբաժանումը համապատասխան գրությամբ, մասնավորապես 20.10.2017թ. ծանուցել է 2017թ. 4-րդ եռամսյակում վերը նշված ապրանքների մատակարարման վերաբերյալ, սակայն մեր ընկերությունը մատակարարում չի իրականացրել, հայտնում ենք, որ տվյալ ծանուցումը ստացվել է ոչ պաշտոնական էլեկտրոնային հասցեից և մեր ընկերությունը պարտավոր չէր անծանոթ էլեկտրոնային հասցեից ուղղարկված գրությանը ընթացք տալ:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարությունը բազմիցս խախտելով ՇՀԱՊՁԲ-3/1-2 պայմանագրով նախատեսված մատակարարված ապրանքների դիմաց վճարում կատարելու պարտավորությունը և անտեսելով «Մակսիմ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի 3.3.4-րդ կետի ուժով պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ գրությունը, որոշել է 25.10.2017թ.-՝ ինքը լուծել պայմանագիրը:

«Գնումների մասին» 2016թ. ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոշարադրած փաստերը՝ գտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը, միակողմանի մասնակի լուծելով ՀՀ ՊՆ-ի և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 15.03.2017թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման ՇՀԱՊՁԲ-3/1-2 ծածկագրով պայմանագիրը, գործել է ոչ իրավաչափ և խախտել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջները:

Ի լրումն «Մակսիմ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 11.12.2017թ. ներկայացրած դիրքորոշմանը՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 11.12.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ՝ նիստը նախագահողը հարց բարձրացրեց, թե արդյոք «Մակսիմ» ՍՊԸ-ի կողմից 28.08.2017թ.

մատակարարումները: Հենց այդ պատճառով պատվիրատուի կողմից պայմանագիրը լուծվել է միայն 4-րդ եռամսյակի մասով՝ հիմք ընդունելով ՀՀ ՊՆ-ի 20.11.2017թ.-ի ԴՎԱ/4240 գրությունը:

Պետք է նշել նաև, որ 4-րդ եռամսյակում «Մակսիմ» ՍՊԸ-ին մատակարարման համար պատվիրատուի կողմից ներկայացվել են ոչ պատշաճ պատվերի հայտեր: Մասնավորապես, երկու հայտ՝ 2017թ. հոկտեմբերի 20-ին և 21-ին, ներկայացվել են անհայտ էլեկտրոնային հասցեից: Ավելին, պատվերի հայտերը ստորագրված և ելք արված չեն եղել, նշված չէր ուղարկողի պաշտոնը, նշված էր ոչ մեր, այլ ուրիշ կազմակերպության անուն, գրության մեջ նշված չէր, թե ինչ պետք է գրված լինի ծաղկեպսակի ժապավենի վրա՝ «Մահացողի անունը և ում կողմից»: Նախորդ բոլոր հայտերով պատվիրատուն մշտապես պարտադիր հայտնում էր այդ տեղեկությունը:

Նույն նիստի ժամանակ պատվիրատուի ներկայացուցիչը վիճարկել է 31.03.2017թ. թիվ 2 արձանագրությամբ նախատեսված վճարման ենթակա գումարի ուշացման հարցը՝ այն հիմնավորմամաբ, թե իբր ուշացումը պայմանավորված է եղել փաստաթղթերի անհամապատասխանությունների հետևանքով: Այս կապակցությամբ հայտնում ենք, որ պատվիրատուի կողմից մատնանշված պատճառաբանությունները չեն համապատասխանում իրականությանը, չեն կարող ներկայացվել այդ պնդումը հավաստող հիմնավոր ապացույցներ, քանզի հենց պատվիրատուն ընկերությանը ուղղված 08.09.2017թ. ԴՎԱ/3010 գրությամբ հայտնել է, որ այդ փաստաթուղթը իբրև թե ներկայացվել է շտկման՝ առձեռն, առանց փաստաթղթային ձևակերպման, հնարավորինս արագ լինելու նպատակով: Այսինքն հենց պատվիրատուն է ընդունում, որ առկա չէ որևէ փաստաթղթային ապացուց, որը կվկայեր, որ 31.03.2017թ. թիվ 2 արձանագրությունը ներկայացվել է շտկման:

Բացի այդ, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ ՀՀ ՊՆ և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 15.03.2017թ. կնքված ՇՀԱՊՁԲ-3/6-1 ծածկագրով Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն՝ վաճառողը իրավունք ունի լուծել պայմանագիրը, եթե գնորդը էականորեն խախտել է պայմանագիրը: Իսկ նույն պայմանագրի 3.3.4.1 կետի համաձայն՝ գնորդի կողմից պայմանագրի խախտելը էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

Իսկ պատվիրատուի կողմից վճարումը ուշացվել է ոչ միայն վիճարկվող հանձնման-ընդունման թիվ 2 արձանագրությամբ, այլ նաև երկու /այսինքն մեկից ավելի, բազմիցս/ հանձնման-ընդունման 07.06.2017թ թիվ 5 արձանագրամբ և 12.07.2017թ. թիվ 15 արձանագրամբ:

Ընկերությունը՝ ի լրումն ներկայացված դիրքորոշումների, 18.12.2017թ. Խորհրդին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 14.12.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ՝ նիստը նախագահողը հարց բարձրացրեց, թե արդյոք 1-ին 2-րդ և 3-րդ եռամսյակներում «Մակսիմ» ՍՊԸ-ն կատարել է ստանձնած պարտավորությունները, թե՝ ոչ:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ համաձայն հրավերի տեխնիկական բնութագրի՝ ծաղկային կոմպոզիցիաները (Ծաղկեպսակ մեծ) ծաղկեպսակի համար նախատեսված ժապավենով (համապատասխան գրառմամբ) պատվիրվում է ոչ ուշ, քան 24 ժամ առաջ:

Վերոհիշյալ ձևակերպումից հստակ երևում է, որ ծաղկային կոմպոզիցիաները պատվիրատուին մատակարարվում են՝ պատվիատուի կողմից դրանք նախապես պատվիրելու հիման վրա:

Պետք է նշել, որ «Մակսիմ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել են Պատվիրատուի կողմից պատվիրված բոլոր ծաղկեպսակները:

Ինչ վերաբերում է պայմանագրի լուծման հիմքին, ապա հայտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ 24.11.2017թ. «Մակսիմ» ՍՊԸ-ին ուղղված թիվ ԴՎԱ/4240 գրությամբ հայտնել է հետևյալը. «Համաձայն պատասխանատու ստորաբաժանման համապատասխան գրության՝ 2017թ. 4-րդ եռամսյակում, մասնավորապես՝ 20.10.2017թ. և 21.10.2017թ., ծանուցվել եք վերը նշված ապրանքների մատակարարման վերաբերյալ, սակայն մատակարարում չեք իրականացրել: Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. հոկտեմբերի 25-ին՝ միակողմանի մասնակի լուծում է վերը նշված պայմանագիրը՝ 33 հատ ծաղկային կոմպոզիցիաների (Ծաղկեպսակ մեծ) մասով:

Վերոհիշյալից հստակ երևում է, որ ՀՀ ՊՆ-ի կողմից արձանագրվել է միայն երկու մատակարարման խախտում՝ 20.10.2017թ. և 21.10.2017թ. պատվերների դիմաց:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ՀՀ ՊՆ-ի կողմից 2017թ. հոկտեմբերի 20-ին և 21-ին ներկայացված այդ երկու պատվերները ներկայացվել են ոչ պատշաճ ձևով: Մասնավորապես, դրանք ներկայացվել են անհայտ էլեկտրոնային հասցեից, պատվերի հայտերը ստորագրված և ելք արված չեն եղել, նշված չէր ուղարկողի պաշտոնը, նշված էր ոչ ընկերության, այլ ուրիշ կազմակերպության անուն «Մակսիմ» ՍՊԸ-ի փոխարեն՝ «Կաքսիմ» ՍՊԸ, գրության մեջ նշված չէր, թե ինչ պետք է գրված լինի ծաղկեպսակի ժապավենի վրա՝ «Մահացողի անունը և ում կողմից», իսկ համապատասխան գրառումը հանդիսանում է տեխնիկական բնութագրով սահմանված պարտադիր պահանջ: Նախորդ բոլոր հայտերով պատվիրատուն մշտապես պարտադիր հայտնում էր այդ տեղեկությունը:

Այսպիսով, 2017թ. հոկտեմբերի 25-ին՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը միակողմանի մասնակի լուծել է վիճարկվող պայմանագիրը՝ 20.10.2017թ. և 21.10.2017թ. պատվերները չմատակարարելու հիմքով, այն դեպքում, երբ.

«Մակսիմ» ՍՊԸ-ն դեռևս 28.08.2017թ. ինքն էր միակողմանի լուծել վերոհիշյալ պայմանագիրը և դրա հետևանքով չուներ պարտավորություն կատարելու 20.10.2017թ. և 21.10.2017թ. ներկայացված պատվերները:

20.10.2017թ. և 21.10.2017թ. պատվերները ներկայացվել են սահմանված պահանջներին անհամապատասխան, և անգամ «Մակսիմ» ՍՊԸ-ի կողմից պայմանագիրը միակողմանի լուծած չլինելու դեպքում դրանք օբյեկտիվորեն հնարավոր չէր լինի կատարել:

14.12.2017թ. նիստի ժամանակ պատվիրատուի ներկայացուցիչը պնդել է, որ 31.03.2017թ. թիվ 2 արձանագրությանը ներկայացվել է ոչ մարտի 31-ին, այլ շատ ավելի ուշ, որն էլ եղել է վճարումը ուշացնելու պատճառը:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ ինչպես ընկերությունը հայտնել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 11.12.2017թ. ուղղված իր գրությամբ, 31.03.2017թ. հանձնման-ընդունման թիվ 2 արձանագրության հիման վրա վճարումը կատարվել է միայն 03.05.2017թ., 25 բանկային օր հետո, ուշացումը՝ 5 բանկային օր: Մինչդեռ ՀՀ ՊՆ-ի կողմից այդպես էլ չի ներկայացվել որևէ ապացույց, որը կհիմնավորեր, որ 31.03.2017թ. թիվ 2 արձանագրության շտկված տարբերակը ներկայացվել է այնքան ուշ, որ վճարումը ուշացնելու 5 բանկային օրը լիներ արդարացված:

Միևնույն ժամանակ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, ՀՀ ՊՆ-ի կողմից այդպես էլ չվիճարկվեց վճարման երկու այլ ժամկետի խախտումները՝ հանձնման-ընդունման թիվ 5 արձանագրության հիման վրա /ուշացումը՝ 4 բանկային օր/ և թիվ 15 արձանագրության հիման վրա /ուշացումը՝ 2 բանկային օր/:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 14.12.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ՝ նիստը նախագահողը հարց բարձրացրեց, թե արդյոք ՀՀ ՊՆ մոտ ընդունված ապրանքի դիմաց վճարման ժամանակացույցով նախատեսված ֆինանսական միջոցները բավարարել են, թե՝ ոչ:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ սույն պայմանագրի շրջանակներում «Մակսիմ» ՍՊԸ-ի և ՀՀ ՊՆ-ի միջև ստորագրվել են հետևյալ հանձնման-ընդունման ակտերը.

- Համաձայն 31.03.2017թ. թիվ 2 արձանագրության /հանձնած առաջին խմբաքանակ/՝ 20 հատ ծաղկային կոմպոզիցիաների (Ծաղկեպսակ մեծ) համար վճարման ենթակա գումարը կազմում է 859.800 ՀՀ դրամ: Ըստ վճարման ժամանակացույցի՝ մարտ ամսվա համար նախատեսված է 859 800 ՀՀ դրամ, ապրիլ ամսվա համար՝ 2 149 500 ՀՀ դրամ:
- Համաձայն 10.05.2017թ. թիվ 4 արձանագրության /հանձնած երկրորդ խմբաքանակ/՝ հանձնած 12 ծաղկային կոմպոզիցիաների (Ծաղկեպսակ մեծ) համար վճարման ենթակա գումարը կազմում է 515.880 ՀՀ դրամ: Ըստ վճարման ժամանակացույցի՝ ապրիլ ամսվա համար նախատեսված է 2 149 500 ՀՀ դրամ, իսկ մայիս ամսվա համար՝ նույնպես 2 149 500 ՀՀ դրամ:
- Համաձայն 07.06.2017թ. թիվ 5 արձանագրության /հանձնած երրորդ խմբաքանակ/՝ հանձնած 10 ծաղկային կոմպոզիցիաների (Ծաղկեպսակ մեծ) վճարման ենթակա գումարը կազմում է 429.900 ՀՀ դրամ: Ըստ վճարման ժամանակացույցի՝ հունիս ամսվա համար նախատեսված է 2 149 500 ՀՀ դրամ, իսկ հուլիս ամսվա համար՝ 3 439 200 ՀՀ դրամ:
- Համաձայն 12.07.2017թ. թիվ 15 արձանագրության /հանձնած չորրորդ խմբաքանակ/՝ հանձնած 8 ծաղկային կոմպոզիցիաների (Ծաղկեպսակ մեծ) վճարման ենթակա գումարը կազմում է 343 920 ՀՀ դրամ: Ըստ վճարման ժամանակացույցի՝ հուլիս ամսվա համար նախատեսված է 3 439 200 ՀՀ դրամ, իսկ օգոստոս ամսվա համար՝ նույնպես 3 439 200 ՀՀ դրամ:

Միևնույն ժամանակ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, ՀՀ ՊՆ-ի կողմից այդպես էլ չվիճարկվեց վճարման երկու այլ ժամկետի խախտումները՝ հանձնման-ընդունման թիվ 5 արձանագրության հիման վրա /ուշացումը՝ 4 բանկային օր/ և թիվ 15 արձանագրության հիման վրա /ուշացումը՝ 2 բանկային օր/:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 14.12.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ՝ նիստը նախագահողը հարց բարձրացրեց, թե արդյոք ՀՀ ՊՆ մոտ ընդունված ապրանքի դիմաց վճարման ժամանակացույցով նախատեսված ֆինանսական միջոցները բավարարել են, թե՝ ոչ:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ սույն պայմանագրի շրջանակներում «Մակսիմ» ՍՊԸ-ի և ՀՀ ՊՆ-ի միջև ստորագրվել են հետևյալ հանձնման-ընդունման ակտերը.

- Համաձայն 31.03.2017թ. թիվ 2 արձանագրության /հանձնած առաջին խմբաքանակ/՝ 20 հատ ծաղկային կոմպոզիցիաների (Ծաղկեպսակ մեծ) համար վճարման ենթակա գումարը կազմում է 859.800 ՀՀ դրամ: Ըստ վճարման ժամանակացույցի՝ մարտ ամսվա համար նախատեսված է 859 800 ՀՀ դրամ, ապրիլ ամսվա համար՝ 2 149 500 ՀՀ դրամ:
- Համաձայն 10.05.2017թ. թիվ 4 արձանագրության /հանձնած երկրորդ խմբաքանակ/՝ հանձնած 12 ծաղկային կոմպոզիցիաների (Ծաղկեպսակ մեծ) համար վճարման ենթակա գումարը կազմում է 515.880 ՀՀ դրամ: Ըստ վճարման ժամանակացույցի՝ ապրիլ ամսվա համար նախատեսված է 2 149 500 ՀՀ դրամ, իսկ մայիս ամսվա համար՝ նույնպես 2 149 500 ՀՀ դրամ:
- Համաձայն 07.06.2017թ. թիվ 5 արձանագրության /հանձնած երրորդ խմբաքանակ/՝ հանձնած 10 ծաղկային կոմպոզիցիաների (Ծաղկեպսակ մեծ) վճարման ենթակա գումարը կազմում է 429.900 ՀՀ դրամ: Ըստ վճարման ժամանակացույցի՝ հունիս ամսվա համար նախատեսված է 2 149 500 ՀՀ դրամ, իսկ հուլիս ամսվա համար՝ 3 439 200 ՀՀ դրամ:
- Համաձայն 12.07.2017թ. թիվ 15 արձանագրության /հանձնած չորրորդ խմբաքանակ/՝ հանձնած 8 ծաղկային կոմպոզիցիաների (Ծաղկեպսակ մեծ) վճարման ենթակա գումարը կազմում է 343 920 ՀՀ դրամ: Ըստ վճարման ժամանակացույցի՝ հուլիս ամսվա համար նախատեսված է 3 439 200 ՀՀ դրամ, իսկ օգոստոս ամսվա համար՝ նույնպես 3 439 200 ՀՀ դրամ:

Բերված թվերի համադրումից ուղղակիորեն բխում է, որ ՀՀ ՊՆ մոտ ընդունված ապրանքի դիմաց վճարման ժամանակացույցով նախատեսված ֆինանսական միջոցները բավարարել են, և վերջինս ուներ բոլոր հնարավորությունները կատարելու վիճարկվող պայմանագրի 4.2 կետով ստանձնած՝ մատակարարված ապրանքի դիմաց ժամանակին վճարում կատարելու պարտականությունը: Մինչդեռ, ինչպես բազմիցս նշվել է, ՀՀ պաշտպանության նախարարությունը բազմիցս խախտել է ՇՀԱՊՁԲ-3/1-2 պայմանագրով նախատեսված մատակարարված ապրանքների դիմաց վճարում կատարելու պարտավորությունը, որի հետևանքով «Մակսիմ» ՍՊԸ-ն, պայմանագրի 3.3.4 կետի հիմքով, պատվիրատուին ուղղված 28.08.2017թ. գրությամբ պայմանագիրը միակողմանի լուծել է:

Հաշվի առնելով վերոշարադրած փաստերը՝ գտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը, միակողմանի մասնակի լուծելով ՀՀ ՊՆ-ի և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 15.03.2017թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման ՇՀԱՊՁԲ-3/1-2 ծածկագրով պայմանագիրը, գործել է ոչ իրավաչափ և խախտել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջները:»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության շահերի ներկայացման կապակցությամբ ներգրավված՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի հիմնադիր Հասմիկ Ենգոյանը և նույն ընկերության տնօրեն Արթուր Պարանյանը:

4.<u>ՍՑ-ԷՍ-2017/70 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 30.11.2017թ. թիվ 03/26-3/22068-17 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 28.11.2017թ. թիվ ԴՎԱ/4301 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 15.03.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-3/1-2 ծածկագրով գնման պայմանագիրը, «Մակսիմ» ՍՊԸ-ին ուղղված 20.11.2017թ. թիվ ԴՎԱ/4240 գրությունը, «Մակսիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումները.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 15.03.2017թ. կնքվել է N ՇՀԱՊՁԲ-3/1-2 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր) 4.299.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Մակսիմ» ՍՊԸ-ն) պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակակարել Պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար (հավելված N3):
- 3.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:
- 3.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:
- 3.2.3 կետի համաձայն՝ Գնորդը պարտավորվում է պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:
- 3.3.4 կետի համաձայն՝ վաճառողը իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդը էականորեն խախտել է պայմանագիրը:
- 3.3.4.1 կետի համաձայն՝ Գնորդի կողմից Պայմանագրի խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:
- 4.2 կետի համաձայն՝ Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով հավելված 3-ով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը

կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն նույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ, քան 2017թ. դեկտեմբերի 10-ը:

Պայմանագրի Հավելված 1-ով սահմանվել է գնման ենթակա ապրանքի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

«Ծաղկեպսակ մեծ՝ 120 սմ. Տրամագծով, բնական, թարմ ծաղիկներից՝ մեխակներ 500 հատ, պատրաստված և գեղեցիկ ձևավորված, համապատասխան զամբյուղով /կամ ծաղկեպսակի համար նախատեսված շրջանաձև պատվանդանով՝ եռոտանի հենակով/, պենոպլաստե հիմքով, հետևի մասը ամբողջությամբ պատված բնական կանաչով, ծաղկեպսակի համար նախատեսված ժապավենով /համապատասխան գրառմամբ/ պատվիրվում է ոչ ուշ քան 24 ժամ առաջ: Տեղափոխումը մատակարարի ուժերով, պատասխանատու ստորաբաժանման կողմից նշված հասցեում /ՀՀ տարածք/ ծաղիկների թարմությունը ապահովող հարմարեցված մեքենայով: Կոտրված ծաղիկները ենթակա են փոխարինման:»:

Պայմանագրի Հավելված 2-ով նախատեսված գնման ժամանակացույցի համաձայն՝ սահմանվել է ապրանքի մատակարարման հետևյալ քանակները և ժամկետները.

«2017թ. 1-ին եռամսյակում 20 հատ, 2-րդ եռամսյակում՝ 30 հատ, 3-րդ եռամսյակում՝ 30 հատ և 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ.՝ 20 հատ:»:

Պատվիրատուն 20.11.2017թ. գրությամբ դիմել է «Մակսիմ» ՍՊԸ-ին՝ հայտնելով հետևյալը.

«Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 15.03.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-3/1-2 գնման պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր)՝ Ձեր ընկերությունը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2017թ. ընթացքում մատակարարել ծաղկային կոմպոզիցիաներ (ծաղկեպսակ մեծ): Համաձայն պատասխանատու ստորաբաժանման համապատասխան գրության, 2017թ. 4-րդ եռամսյակում, մասնավորապես՝ 20.10.2017թ. և 21.10.2017թ. ծանուցվել եք վերը նշված ապրանքների մատակարարման

վերաբերյալ, սակայն մատակարարում չեք իրականացրել: Հիմք ընդունելով վերոնշյալ Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 25.10.2017թ. միակողմանի մասնակի լուծել է վերը նշված պայմանագիրը՝ 33 հատ ծաղկային կոմպոզիցիաներ (ծաղկեպսակ մեծ) մասով: Տեղեկացնում եմ, որ «Մակսիմ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 43 000 (քառասուներեք հազար) ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ մատակարարման ժամկետների խախտման համար (պայմանագրի 7.2 կետի համաձայն):»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով 11.12.2017թ. կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը պնդեց Խորհրդին ներկայացրած դիրքորոշումները՝ հայտնելով հետևյալը.

N ՇՀԱՊՁԲ-3/1-2 ծածկագրով Պայմանագրի գնման ժամակացույցի համաձայն՝ ծաղկային կոմպոզիցիաներ /Ծաղկեպսակներ մեծ/ պետք է մատակարարվեին 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակում՝ համապատասխանաբար՝ 20, 30, 30 թվաքանակով և ըստ Պայմանագրի վճարման ժամանակացույցի՝ ծաղկեպսակների համար ֆինանսավորումը նախատեսված էր՝ 2017թ. մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, սակայն պատվիրատուի կողմից բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները, մասնավորապես՝ հանձնման-ընդունման թիվ 2, թիվ 5 և թիվ 15 արձանագրություններով նախատեսված վճարումները: Հաշվի առնելով տվյալ հանգամանքը Ընկերությունը 28.08.2017թ. պատվիրատուին ուղղված գրությամբ տեղեկացրել է, որ N ՇՀԱՊՁԲ-3/1-2 ծածկագրով Պայմանագիրը Ընկերությունը մասնակի լուծում է՝ հրաժարվելով սեպտեմբերի 1-ից մինչև 2017թ. 4-րդ եռամսյակի վերջ մատակարարման ենթակա ապրանքների մատակարարումից ամբողջությամբ:

Ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ Պայմանագիրը միակողմանի լուծելուց հետո Պատվիրատուն գրեթե երկու ամիս անց՝ 20.11.2017թ., գրությամբ «Մակսիմ» ՍՊԸ-ին հայտնել է, որ 2017թ. 4-րդ եռամսյակում՝ մասնավորապես 20.10.2017թ. և 21.10.2017թ. ծանուցել է Ընկերությանը նշված ապրանքի մատակարարման վերաբերյալ, սակայն մատակարարում չի իրականացվել և 25.10.2017թ. Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

Խորհրդում 14.12.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ 31.03.2017թ. թիվ 2 արձանագրությանը ներկայացվել է ոչ մարտի 31-ին, այլ շատ ավելի ուշ, որն էլ եղել է վճարումը ուշացնելու պատճառը:

Խորհուրդն՝ ուսումնասիրելով 31.03.2017թ. թիվ 2, 07.06.2017թ. թիվ 5 և 12.07.2017թ. թիվ 15 հանձնման-ընդունման արձանագրություններն, ինչպես նաև նշված արձանագրությունների հիման վրա կատարված վճարումների վերաբերյալ Ընկերության հաշվի քաղվածքները, արձանագրում է, որ Պատվիրատուն նշված հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարած յուրաքանչյուր վճարումն ուշացրել է 2 բանկային օրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը միակողմանի մասնակի լուծելով Պայմանագիրը, գործել է իրավաչափ, քանի որ Պատվիրատուն էականորեն խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուն Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու ծանուցումը Ընկերությանն ուղարկել է Ընկերության կողմից Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելուց հետո:

Այսպիսով, Խորհուրդն գտնում է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը, միակողմանի մասնակի լուծելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 15.03.2017թ. կնքված ՇՀԱՊՁԲ-3/1-2 ծածկագրով պայմանագիրը, գործել է ոչ իրավաչափ:

Խորհուրդն անհիմն է համարում Պատվիրատուի այն հիմնավորումը, որ 31.03.2017թ. թիվ 2 արձանագրությանը Ընկերության կողմից ներկայացվել է Պատվիրատուին ոչ թե մարտի

31-ին, այլ շատ ավելի ուշ, որն էլ եղել է վճարումը ուշացնելու պատճառը, քանի որ Պայմանագրի 6.2 կետի համաձայն՝ Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.11.2017թ. «Մակսիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**